ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 11 >> հունվարի 2019թ. N 8-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության լիցենզավորման, գործունեության ծանուցման և գնահատման գործակալության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«11» հունվարի 2019թ.
N 8-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) լիցենզավորման, գործունեության ծանուցման և գնահատման գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Գործակալությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Գործակալության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Գործակալության հիմնական խնդիրներն են՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը՝ իր իրավասությունների շրջանակներում, մասնավորապես՝

1) խաղատների, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման գործունեությունների լիցենզավորումը.

2) աուդիտորական գործունեության լիցենզավորումը.

3) ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորումը.

4) ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառումը:

III. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Լիցենզավորման և ծանուցումների բնագավառում Գործակալության գործառույթներն են՝

1) շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպման գործունեությունների, աուդիտորական, ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորման գործընթացի կազմակերպումը, ինչպես նաև ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գործընթացի կազմակերպումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված գործունեությունների լիցենզավորման հայտերի և ծանուցումների ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող գործառույթների իրականացումը.

3) Նախարարությունում գործող՝ լիցենզավորող հանձնաժողովների նիստերի նախապատրաստումը, կազմակերպումը, դրանից բխող գործառույթների իրականացումը և լիցենզավորող հանձնաժողովների եզրակացություններից բխող գործառույթների իրականացումը.

4) սույն կետի 1-ին ենթակետում նշված լիցենզավորման գործունեությունների լիցենզիաների վերաձևակերպման հայտերի ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող գործառույթների իրականացումը.

5) սույն կետի 1-ին ենթակետում նշված լիցենզավորման գործունեությունների իրականացման վայրերի փոփոխման հայտերի ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող գործառույթների իրականացումը.

6) սույն կետի 1-ին ենթակետում նշված գործունեություններ իրականացնողների կողմից ներկայացված լիցենզավորմանը վերաբերվող փաստաթղթերի ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող գործառույթների իրականացումը.

7) սույն կետի 1-ին ենթակետում նշված գործունեությունների իրականացման լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման միասնական էլեկտրոնային գրանցամատյանների վարումը.

8) սույն կետի 1-ին ենթակետում նշված գործունեությունների իրականացման լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման միասնական էլեկտրոնային գրանցամատյաններում տեղ գտած փոփոխությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի և դրանք այլ պետական մարմիններին տրամադրումը.

9) սույն կետի 1-ին ենթակետում նշված լիցենզավորման և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնողներին վերաբերվող լիցենզավորման և ծանուցման պարտադիր պահանջներ կամ պայմաններ սահմանող իրավական ակտերում տեղ գտած փոփոխությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի և դրանք համապատասխան գործունեություն իրականացնողներին հայտնելը.

10) սույն կետի 1-ին ենթակետում նշված գործունեությունների լիցենզիաներ տրամադրելու և ծանուցման ենթակա գործունեությունների իրականացման հաշվառման համար Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով ու չափով պետական տուրքի գանձումը.

11) Նախարարության համապատասխան բնագավառների քաղաքականություն մշակող ստորաբաժանումներին, ըստ անհրաժեշտության, Գործակալությունում առկա տեղեկատվության տրամադրումը.

12) Նախարարությանն ուղղված՝ սույն կետի 1-ին ենթակետում նշված գործունեություններ իրականացնողների լիցենզավորմանը վերաբերվող դիմումների ուսումնասիրությունը և դրանց համապատասխան ընթացք տալը.

13) Գործակալության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման գործընթացին մասնակցությունը.

14) քաղաքացիներից, կազմակերպություններից, հանրապետական գործադիր մարմիններից, պետական և ոչ պետական այլ մարմիններից ստացվող՝ Գործակալության գործառույթներին վերաբերող դիմումների ուսումնասիրությունը և դրանց համապատասխան ընթացք տալը.

15) վիճակախաղերի կազմակերպիչների կողմից ներկայացված գովազդի բովանդակությանը համաձայնություն տալու վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելը.

16) շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատան կազմակերպիչների կողմից հաստատված՝ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև վիճակախաղերի կազմակերպիչների կողմից վիճակախաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգերին համաձայնություն տալու վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելը.

17) շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպման, աուդիտորական ծառայությունների իրականացման, ինկասացիոն ծառայությունների մատուցման գործունեություններ իրականացնող լիցենզավորված անձանց, ինչպես նաև ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց կողմից հերթական տարեկան պետական տուրքերի վճարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը.

18) սույն կետի 1-ին ենթակետում նշված գործունեությունների իրականացման ապահովման համար, լիցենզավորված և հաշվառված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների իրականացումը՝ դրանց արդյունքներով պայմանավորված գործառույթների իրականացումը.

19) սույն կետի 1-ին ենթակետում նշված անձանց կողմից թույլ տրված կասեցման և դադարեցման համար հիմք հանդիսացած խախտումների հաշվառումը.

20) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Գործակալությունը ղեկավարում է Գործակալության պետը: Գործակալության պետն ունի տեղակալ, ով ի պաշտոնե Գործակալության բաժիններից մեկի պետն է: Գործակալության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետ-գործակալության պետի տեղակալը կամ մյուս բաժնի պետը՝ Գործակալության պետի հանձնարարությամբ:

7.Գործակալության բաժնի պետ- գործակալության պետի տեղակալը համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված բնագավառներում և կատարում Գործակալության պետի հանձնարարականները:

8. Գործակալության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

9. Գործակալության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

10. Գործակալության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

11. Գործակալության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Գործակալության պետը:

12. Գործակալության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետը:

V. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

13. Գործակալության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Լիցենզավորման և ծանուցումների հաշվառման բաժին.

2) Խաղային գործի լիցենզավորման բաժին:

14. Գործակալության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):